

**Ֆիզիկական և իրավաբանական անձանց 2015 թվականի դիմումների ու
հարցումների վերաբերյալ տեղեկատվություն**

2015 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն մուտքագրվել է քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ստացված **195** դիմում, որոնց ընթացք է տրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմումների կառուցվածքն ըստ ուղղությունների՝

Ուղևորության դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ – 91 դիմում

Պաշտոնում նշանակվելու և աշխատանքի ընդունվելու վերաբերյալ – 75 դիմում

Ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ - 15 դիմում

Տարբեր բնույթի խնդրանքների և տեղեկանք տրամադրելու վերաբերյալ – 14 դիմում

2015 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում զանգվածային լրատվության միջոցներից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից առձեռն, էլեկտրոնային փոստով կամ նախարարության պաշտոնական կայքի միջոցով ստացվել է տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ **5** գրավոր հարցում, որոնց ընթացք է տրվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ բանավոր (այցելության և հեռախոսազանգի միջոցով) հարցումներին պատասխանվել է անմիջապես կամ ողջամիտ ժամկետում, որոնց վերաբերյալ առանձին հաշվառում չի վարվել: